



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2009թ. նոյեմբերին /վերլուծություն/

2009թ. նոյեմբերին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 15674 գործարքներ, որոնց քանակը 2008թ. նոյեմբերի համեմատ աճել է 24.6%-ով, իսկ 2009թ. հոկտեմբերի համեմատ՝ 2.6%-ով:

2009թ. նոյեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2009թ. նոյեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2009թ. նոյեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4067 օտարման գործարքների 81.8%-ը կազմել են առուվաճառքները, 17.4%-ը՝ նվիրատվությունները և 0.8%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 35.1%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 33.6%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2009թ. նոյեմբերին, 2009թ. հոկտեմբերի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 0.5%-ով, իսկ 2008թ. նոյեմբերի համեմատ՝ 9.1%-ով:

2009թ. նոյեմբերին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 64.3%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2009թ. նոյեմբերին, 2009թ. հոկտեմբերի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 20.8%-ով, իսկ 2008թ. նոյեմբերի համեմատ աճել՝ 37.3%-ով:

2009թ. նոյեմբերին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	նոյեմբեր 2008թ.	նոյեմբեր 2009թ.	հոկտեմբեր 2009թ.
Կենտրոն	495400	465600	461700
Արաբկիր	400400	366800	360100
Քանաքեռ-Զեյթուն	310000	277500	270400
Նոր-Նորք	269100	227600	221800
Ավան	276900	229400	228100
Էրեբունի	271600	241100	235700
Շենգավիթ	278300	241800	235800
Դավթաշեն	299300	261300	253700
Աջափնյակ	265500	230700	226000
Մալաթիա-Սեբաստիա	259000	230100	222800
Նուբարաշեն	167900	142200	143300
Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/	299400	264900	259900

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2009թ. նոյեմբերին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2009թ. հոկտեմբերի համեմատ աճել են 1.9%-ով:

2009թ. նոյեմբերին մարզերում վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 343 բնակարաններ, որոնց քանակը 2009թ. հոկտեմբերի համեմատ նվազել է 8.8%-ով, իսկ 2008թ. նոյեմբերի համեմատ՝ 10.7%-ով:

2009թ. նոյեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		նոյեմբեր 2008թ.	նոյեմբեր 2009թ.	հոկտեմբեր 2009թ.
Արագածոտն	Աշտարակ	140400	135300	135800
	Ապարան	37000	44800	44200
	Թալին	48200	50500	49800
Արարատ	Արտաշատ	107900	90500	88100
	Մասիս	140400	118500	119800

	Վեղի	84800	90900	89700
	Արարատ	72300	86500	84100
Արմավիր	Վաղարշապատ	178700	156700	159700
	Արմավիր	129000	118600	115300
	Մեծամոր	91600	81400	83500
Գեղարքունիք	Սևան	106100	89700	90600
	Գավառ	51800	43000	43000
	Մարտունի	73300	82600	80900
	Վարդենիս	33400	31200	32000
	Ճամբարակ	16700	18700	19200
Լոռի	Վանաձոր	102900	92400	91000
	Ստեփանավան	49400	56300	56300
	Մայիսակ	62800	76100	76100
	Այվերդի	32700	31600	32200
	Տաշիր	33500	34900	34900
	Թումանյան	5600	6100	6100
	Շամլուղ	3200	3400	3400
	Ախթալա	13000	14100	14100
Կոտայք	Աբովյան	177500	150400	147500
	Նոր Հաճն	142100	128300	132000
	Բյուրեղավան	121600	100800	98000
	Եղվարդ	127600	120700	124300
	Հրազդան	76900	59300	59000
	Ծաղկաձոր	172500	181500	175400
	Զարենցավան	98500	75200	77100
Շիրակ	Գյումրի	122500	114800	112000
	Արթիկ	61100	55900	57800
	Մարալիկ	29400	30200	29600
Սյունիք	Գորիս	114600	139400	135000
	Կապան	108200	102000	104100
	Սիսիան	87400	80700	82800
	Մեղրի	49200	56900	55500
	Ագարակ	30300	32800	32800
	Քաջարան	53600	58800	58800
	Դաստակերտ	7000	8000	8000
Վայոց Ձոր	Վայք	83800	70000	71500
	Եղեգնաձոր	106400	110100	110800
	Ջերմուկ	145300	108500	110800
Տավուշ	Դիլիջան	106000	92800	90000
	Իջևան	146700	132500	128800
	Բերդ	40600	42000	42000
	Նոյեմբերյան	31200	33200	33200
	Այրում	21100	24000	24000

2009թ. նոյեմբերին հանրապետության մարզերում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2009թ. հոկտեմբերի համեմատ աճել են 0.3%-ով:

2009թ. նոյեմբերին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 448 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 152, մարզերում միասին վերցրած՝ 296: 2009թ. նոյեմբերին, 2009թ. հոկտեմբերի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակն աճել է 0.4%-ով, ընդ որում Երևանում նվազել է 3.2%-ով, իսկ մարզերում միասին վերցրած աճել՝ 2.4%-ով: 2008թ. նոյեմբերի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի

գործարքների քանակն աճել է 14.6%-ով, ընդ որում Երևանում աճել է 94.9%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ նվազել 5.4%-ով:

2009թ. նոյեմբերին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	նոյեմբեր 2008թ.	նոյեմբեր 2009թ.	հոկտեմբեր 2009թ.
Կենտրոն	510000	471300	468000
Արաբկիր	438400	371500	367000
Քանաքեռ Զեյթուն	325700	280200	275400
Նորք Մարաշ	313700	279500	277800
Ավան	291000	234300	234500
Էրեբունի	291000	244200	242000
Շենգավիթ	293800	243800	241000
Դավթաշեն	324500	264600	259000
Աջափնյակ	302200	234400	232000
Մալաթիա-Սեբաստիա	295300	233000	228200
Նուբարաշեն	172300	147100	146800
<i>Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/</i>	323400	273100	270200

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2009թ. նոյեմբերին անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2009թ. հոկտեմբերի համեմատ աճել են 1,1%-ով:

2009թ. նոյեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		նոյեմբեր 2008թ.	նոյեմբեր 2009թ.	հոկտեմբեր 2009թ.
Արագածոտն	Աշտարակ	144800	141200	141000
	Ապարան	38900	46600	46400
	Թալին	48800	51600	51100
Արարատ	Արտաշատ	112300	91800	90000
	Մասիս	141500	122800	121800
	Վեդի	91600	92300	91500
Արմավիր	Արարատ	73000	87300	87100
	Վաղարշապատ	180500	164900	163300
	Արմավիր	132500	118800	117600
	Սևան	107300	92700	91900
	Գավառ	55400	45800	45600

Գեղարքունիք	Մարտունի	77600	84100	82200
	Վարդենիս	37100	34000	33900
	Ճամբարակ	21200	20800	20400
Լոռի	Վանաձոր	110000	96000	94200
	Ստեփանավան	53800	59900	58800
	Սպիտակ	67600	78600	78200
	Ալավերդի	37300	34600	34000
	Տաշիր	37900	37100	36900
	Թումանյան	10400	10100	10000
	Շամլուղ	7400	7400	7400
	Ախթալա	16200	18200	18200
Կոտայք	Արուսյան	192100	153800	151000
	Նոր Հաճն	143800	136000	135500
	Բյուրեղավան	122700	102700	99400
	Եղվարդ	133500	127700	126000
	Հրազդան	81000	62600	62200
	Ծաղկաձոր	271300	296100	294500
	Չարենցավան	100500	80000	79800
Շիրակ	Գյումրի	124300	116100	113900
	Արթիկ	63700	60500	59400
	Մարալիկ	32700	31500	31300
Սյունիք	Գորիս	126600	140400	136500
	Կապան	109400	104900	106300
	Սիսիան	88600	84100	85600
	Մեղրի	51700	59000	57200
	Ագարակ	33300	34600	34300
	Դաստակերտ	10400	10500	10400
Վայոց Ձոր	Վայք	87300	73100	72700
	Եղեգնաձոր	111100	113600	112600
	Ջերմուկ	100200	111600	111200
Տավուշ	Դիլիջան	119200	95700	94700
	Իջևան	147700	132800	131300
	Բերդ	42500	43500	43500
	Նոյեմբերյան	36600	34800	34600
	Այրում	23000	25800	25800

2009թ. նոյեմբերին հանրապետության մարզերում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2009թ. հոկտեմբերի համեմատ աճել են 1,0 %-ով:

Ընդհանուր առմամբ, 2009թ. նոյեմբերին հանրապետությունում օտարվել են 1607 միավոր /704.77 հա/ հողեր, որից Երևանում` 98 միավոր /6.78 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր` 788 միավոր /606.76 հա/, որից Երևանում` 5 միավոր /0.98 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր` 612 միավոր /54.54 հա/, որից Երևանում` 82 միավոր /4.98 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր` 149 միավոր /8.60 հա/, որից Երևանում` 11 միավոր /0.81 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր` 21 միավոր /5.16 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր` 31 միավոր /21.29 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր` 5 միավոր /0.42 հա/,

- ջրային հողեր՝ 1 միավոր կառուցապատման իրավունքի վաճառք /8.00 հա/:

2009թ. նոյեմբերին հանրապետությունում օտարված հողերից 1459 միավորի /637.66 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 84 միավոր /5.78 հա/, նվիրատվության գործարքներ՝ 131 միավորի /60.93 հա/, որից Երևանում՝ 14 միավոր /1.00 հա/ և փոխանակության գործարքներ՝ 17 միավորի /6.17 հա/:

Հանրապետությունում 2009թ. նոյեմբերին, 2008թ. նոյեմբերի համեմատությամբ, հողերի առուվաճառքի գործարքների քանակն աճել է 14.3%-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակն աճել է 29.2%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ նվազել է 1.4%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 2.1 անգամ: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 145.54 հա, որից 127.85 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 27.7%-ը կամ 404 գործարքներ /151.91 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 17 գործարքներ /1.10 հա/, իսկ 71.6%-ը կամ 1045 միավորը /477.34 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 67 միավոր /4.67 հա/:

2009թ. նոյեմբերին հանրապետությունում գրանցվել է հողերի կառուցապատման իրավունքի վաճառքի 10 գործարք /8.42 հա/:

Ստորև ներկայացվում է 2009թ. նոյեմբերին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը և կառուցապատման իրավունքի վաճառքները:

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	
Երևան	0	0.00	0	0.00	11	0.77	6	0.33	5	0.98	0	0.00	59	3.26	3	0.43
Արագածոտն	13	13.44	0	0.00	6	0.54	15	1.90	66	86.91	0	0.00	31	3.40	1	0.003
Արարատ	12	27.61	2	1.01	1	0.01	10	0.23	83	30.12	1	0.72	47	4.37	12	0.17
Արմավիր	20	41.59	4	0.82	28	1.20	10	1.09	95	86.27	0	0.00	64	6.55	3	0.02
Գեղարքունիք	0	0.00	0	0.00	69	5.47	0	0.00	146	57.73	0	0.00	18	2.06	0	0.00
Լոռի	3	0.90	2	0.33	21	2.43	17	2.37	61	45.83	1	0.10	60	7.10	1	0.001
Կոտայք	14	23.45	7	0.43	19	1.43	9	0.51	73	46.82	0	0.00	64	5.43	2	0.18
Շիրակ	0	0.00	2	0.50	4	0.31	2	0.01	32	32.50	0	0.00	13	1.17	3	0.04
Սյունիք	1	1.20	0	0.00	0	0.00	14	0.31	13	21.59	0	0.00	2	0.14	3	0.16
Վայոց Ձոր	1	0.10	1	1.07	1	0.07	21	0.45	22	16.78	0	0.00	7	0.67	1	0.003
Տավուշ	4	0.70	0	0.00	22	1.62	2	0.01	36	13.41	0	0.00	11	1.20	3	0.03
Ընդամենը	68	108.99	18	4.16	182	13.85	106	7.21	632	438.94	2	0.82	376	35.35	32	1.04

Ս տորև ներկայացվում է 2009թ. նոյեմբերին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի

նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը.

	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր		Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր					
					բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի	հասարակական կառուցապ. հողերի							բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի	հասարակական կառուցապ. հողերի				
Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/			
Երևան	12	0.38	0	0.00	6	0.05	6	0.33	5	0.71	0	0.00	0	0.00	5	0.71	0	0.00
Արագածոտն	1	0.001	0	0.00	0	0.00	1	0.001	33	15.88	13	13.44	0	0.00	6	0.54	14	1.90
Արարատ	3	1.01	1	1.00	0	0.00	2	0.01	22	27.85	12	27.61	1	0.01	1	0.01	8	0.22
Արմավիր	2	0.51	2	0.51	0	0.00	0	0.00	59	44.04	19	41.44	2	0.31	28	1.20	10	1.09
Գեղարքունիք	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	69	5.47	0	0.00	0	0.00	69	5.47	0	0.00
Լոռի	1	0.005	0	0.00	0	0.00	1	0.005	42	6.02	3	0.90	2	0.33	21	2.43	16	2.36
Կոտայք	3	0.065	1	0.005	1	0.03	1	0.03	45	25.33	13	23.03	6	0.42	18	1.40	8	0.48
Շիրակ	2	0.01	0	0.00	0	0.00	2	0.01	6	0.81	0	0.00	2	0.50	4	0.31	0	0.00
Սյունիք	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	15	1.51	1	1.20	0	0.00	0	0.00	14	0.31
Վայոց Ձոր	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	24	1.69	1	0.10	1	1.07	1	0.07	21	0.45
Տավուշ	5	0.36	0	0.00	5	0.36	0	0.00	21	1.81	2	0.54	0	0.00	17	1.26	2	0.01
Ընդամենը	29	2.34	4	1.52	12	0.44	13	0.39	341	131.12	64	108.26	14	2.64	170	13.40	93	6.82

Հ անրապետությունում 2009թ. նոյեմբերին արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 4 գործարք /0.74 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2009թ. նոյեմբերին, 2008թ. նոյեմբերի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 4.0%-ով: Ընդ որում, Երևանում հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 28.6%-ով, իսկ մարզերում միասին վերցրած աճել է 4.6%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 3.0%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ նվազել է 5.0%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ նվազել է 10.6%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 7.0 անգամ:

Ստորև աղյուսակում ներկայացվում են գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը		Մակերեսը /հա/		արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/	Միավորների քանակը		Մակերեսը /հա/		արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	13	13.44	35.2	400.0	137.4	49	49.23	365.0	12000.0	4400.0
Ապարան								86.5	2727.3	542.0

Թային						11	27.86	93.6	5494.5	481.6
Ծաղկահովիտ						5	9.71	79.5	1000.0	247.6
Արարատի մարզ										
Արտաշատ	1	0.40	70.0	70.0	70.0	22	6.16	335.1	10833.3	2088.7
Մասիս	9	25.06	10.0	2140.5	316.5	12	3.44	200.0	11904.8	2950.0
Վեդի	2	2.15	290.4	672.2	481.3	48	20.27	207.0	10795.1	1841.6
Արմավիրի մարզ										
Արմավիր	16	18.68	35.7	1604.3	266.8	54	30.78	294.3	9090.0	1147.7
Բաղրամյան	2	22.54	35.4	191.6	113.5	22	47.41	90.6	2561.1	655.9
Վաղարշապատ	1	0.22	459.7	459.7	459.7	18	7.08	444.4	11764.7	2908.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						129	45.41	199.8	1875.0	438.2
Ճամբարակ						10	6.00	60.5	953.3	247.8
Մարտունի								51.1	2850.0	565.5
Սևան						3	2.05	52.2	2134.8	240.6
Վարդենիս						4	4.27	41.2	2575.1	410.1
Լոռու մարզ										
Ալավերդի						19	3.18	170.4	6424.2	925.5
Գուգարք	1	0.10	280.0	280.0	280.0			234.6	6065.9	1100.0
Սպիտակ	2	0.80	257.8	331.4	294.6	3	0.78	250.0	5555.5	615.5
Ստեփանավան						7	11.29	90.6	1686.6	392.5
Տաշիր						32	30.57	45.3	1384.4	192.3
Կոտայքի մարզ										
Աբովյան	1	1.00	357.5	357.5	357.5	40	16.76	279.3	11942.7	4713.0
Եղվարդ	5	12.85	153.9	346.2	236.8	26	17.22	174.4	11971.8	3345.8
Հրազդան	7	9.17	109.9	843.8	525.5	5	11.13	130.5	10256.4	1580.6
Շիրակի մարզ										
Ախուրյան						13	11.13	252.0	1693.1	490.5
Ամասիա								40.9	261.0	132.5
Անի						8	16.04	110.6	546.9	276.0
Աշոցք						1	1.51	58.5	215.8	118.6
Արթիկ						10	3.83	79.4	1428.6	247.5
Սյունիքի մարզ										
Գորիս	1	1.20	2220.0	2220.0	2220.0	5	6.63	92.6	1023.2	495.3
Կապան						4	2.15	120.0	841.6	285.3
Մեղրի								193.0	3000.0	590.0
Սիսիան						4	12.81	46.3	1977.4	290.5
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	1	0.10	80.0	80.0	80.0	18	4.12	125.0	10000.0	1525.8
Վայք						4	12.66	58.8	1430.7	505.6
Տավուշի մարզ										
Բերդ						4	0.90	213.3	3783.8	514.6
Իջևան	1	0.13	6000.0	6000.0	6000.0	10	2.56	267.5	9454.5	1033.5
Նոյեմբերյան	1	0.41	312.2	312.2	312.2	22	9.95	46.7	7368.4	760.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Սրբավորն երի թանախ	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Սրբավորն երի թանախ	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		

			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	6	5432.0	178.1	3080.0	662.9	25	19690.4	130.7	22200.0	2571.0
Ապարան						3	4760.0	124.1	609.6	255.0
Թալին						2	7683.0	63.2	1454.8	137.5
Ծաղկահովիտ						1	1890.0	60.0	214.3	77.8
Արարատի մարզ										
Արտաշատ						11	9861.0	173.9	7140.3	892.0
Մասիս	1	110.0	1082.7	1082.7	1082.7	21	15870.0	187.5	25000.0	1216.5
Վեդի						15	17949.0	126.1	5000.0	661.3
Արմավիրի մարզ										
Արմավիր	28	12000.0	1150.0	1400.0	1391.1	21	25243.0	131.6	9090.9	1214.0
Բաղրամյան						1	1210.0	100.0	833.3	180.0
Վաղարշապատ						41	37578.0	197.4	26528.4	1535.5
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						3	3000.0	186.6	1084.3	445.8
Ճամբարակ	66	52006.0	126.0	180.0	127.0	3	4550.0	71.3	2286.2	133.7
Մարտունի						2	2410.0	119.3	5000.0	273.0
Սևան	3	2658.0	393.3	447.3	411.3	5	3844.0	240.0	3110.4	223.6
Վարդենիս						5	6768.0	72.5	987.2	148.5
Լոռու մարզ										
Ալավերդի						5	12780.0	114.3	1388.9	198.3
Գուգարք	6	6336.0	119.5	5983.6	1113.5	4	3008.0	77.9	14083.3	735.8
Սյիտակ	15	18000.0	48.9	55.8	51.5	50	52991.0	104.9	1348.3	194.6
Ստեփանավան						1	2220.0	88.2	1666.7	140.3
Տաշիր								45.3	400.0	76.6
Կոտայքի մարզ										
Արփյան	15	11127.2	634.5	3484.5	3272.7	37	32428.9	264.5	35353.5	2040.5
Եղվարդ						21	16137.0	173.6	27000.0	2815.3
Հրազդան	3	2900.0	413.5	1265.4	779.8	4	3839.0	117.7	34848.5	1341.6
Շիրակի մարզ										
Ախուրյան	3	2748.0	154.0	4296.9	2733.6	7	4270.0	113.6	18750.0	330.4
Ամասիա								45.3	274.7	71.0
Անի						2	3100.0	67.9	180.6	120.2
Աշոցք								40.8	144.0	60.0
Արթիկ	1	400.0	68.8	68.8	68.8	4	4300.0	111.8	5000.0	216.5
Սյունիքի մարզ										
Գորիս								112.2	1700.0	290.5
Կապան						2	1352.0	67.9	2638.9	235.2
Մեղրի								68.5	632.9	145.8
Սիսիան								123.5	875.0	158.5
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	1	668.0	750.0	750.0	750.0	7	6720.0	96.7	7659.6	400.0
Վայք								120.7	1448.3	157.2
Տավուշի մարզ										
Բերդ						3	3907.0	75.8	810.0	97.2
Իջևան	17	12632.0	168.3	2674.1	1628.6	8	8112.0	74.1	14423.1	479.3
Նոյեմբերյան								125.0	1948.1	163.0

2009թ. նոյեմբերին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել է նախկինում անհատույց սեփականաշնորհման 12 գործարքներ 3.06 հա մակերեսով, ընդ որում, 7-ը՝ /1.75 հա/ Լոռու և 5-ը՝ /1.31 հա/ Կոտայքի մարզերում:

2009թ. նոյեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1053 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 6.7%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 85.1%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2009թ. նոյեմբերին 2009թ. հոկտեմբերի համեմատ անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 11.9%-ով, իսկ 2008թ. նոյեմբերի համեմատ աճել՝ 9.7%-ով:

2009թ. նոյեմբերին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 68 բնակարանների, 31 անհատական բնակելի տների, 377 հասարակական, 59 արտադրական նշանակության օբյեկտների, 465 միավոր /3059.82 հա/ հողերի և 53 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2009թ. նոյեմբերին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 3 վարձակալության գործարքների /այդ թվում 1 միավոր՝ 0.0004 հա, կառուցապատման իրավունքով/ քանակը 2009թ. հոկտեմբերի համեմատ նվազել է 40.0%-ով, իսկ 2008թ. նոյեմբերի համեմատ՝ 87.0%-ով: 2009թ. նոյեմբերին հանրապետությունում վարձակալված 3059.82 հա հողերից 0.22 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 3059.60 հա հողերի 0.06 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 1.59 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Գեղարքունիքի մարզում՝ 1061.15 հա, որից 347.29 հա գյուղատնտեսական նշանակության: Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 1114.20 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2009թ. նոյեմբերին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

<i>Մարզի անվանումը</i>	<i>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական.նշ հողերի</i>		<i>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական.նշ հողերի</i>	
	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>
Արագածոտն	0	0.00	25	303.92
Արարատ	2	200.00	43	183.91
Արմավիր	0	0.00	5	4.00
Գեղարքունիք	3	200.00	62	147.29
Լոռի	1	2.00	4	7.29
Կոտայք	0	0.00	7	13.80
Շիրակ	0	0.00	156	158.30
Սյունիք	0	0.00	21	55.95
Վայոց Ձոր	1	712.20	13	346.16
Տավուշ	0	0.00	9	7.63
Ընդամենը	7	1114.20	345	1228.25

2009թ. նոյեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2050 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 13.1%: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների

պետական գրանցումների քանակը 2009թ. հոկտեմբերի համեմատ նվազել է 5.7%-ով, իսկ 2008թ. նոյեմբերի համեմատ աճել՝ 30.5%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /42.8%/, առանձնատների /22.3%/, հասարակական նշանակության օբյեկտների /11.9%/ և հողերի /15.6%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 852 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2009թ. հոկտեմբերի համեմատ նվազել է 12.3%-ով, իսկ 2008թ. նոյեմբերի համեմատ աճել՝ 45.4%-ով:

2009թ. նոյեմբերին հանրապետությունում գրավադրվել են 390.32 հա հողեր, որից 4.21 հա՝ Երևանում: Ընդ որում գրավադրված հողերի 85.2%-ը կամ 332.47 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են, որից Երևանում՝ 0.13 հա: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 135.46 հա, որից 133.42 հա գյուղատնտեսական նշանակության:

2009թ. նոյեմբերին հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 156 գործարքներ, որից 129-ը՝ Երևանում: Ընդ որում, հիփոթեքային գրավադրման գործարքներից 83.3%-ն իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 10.3%-ն՝ անհատական բնակելի տների, 1.3ական%՝ հասարակական, արտադրական նշանակության օբյեկտների և այգետնակների, 2.6%-ը՝ հողերի և 1.9%-ը՝ գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ: 2009թ. հոկտեմբերի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 4.7%-ով, ընդ որում Երևանում աճել է 6.6%-ով, իսկ մարզերում նվազել՝ 3.6%-ով: 2008թ. նոյեմբերի համեմատ հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 90.2%-ով, ընդ որում Երևանում՝ 2.1 անգամ, մարզերում՝ 35.0%-ով:

2009թ. նոյեմբերին հանրապետությունում արձանագրվել են հասարակական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման 2 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.01%: Մասնավորեցման գործարքների քանակը 2009թ. հոկտեմբերի համեմատ մնացել է անփոփոխ, իսկ 2008թ. նոյեմբերի համեմատ նվազել է 66.7%-ով: 2009թ. նոյեմբերին մասնավորեցման գործարքներից 1-ական գործարք արձանագրվել են Վայոց Ձորի և Տավուշի մարզերում:

2009թ. նոյեմբերին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 2317 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2009թ. հոկտեմբերի համեմատ նվազել է 4.3%-ով, իսկ 2008թ. նոյեմբերի համեմատ աճել՝ 10.1%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 14.8%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /29.1%/:

ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն